# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



փետրվարի 2024թ

## ***ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ***

Սպիտակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն կատարվել է.

***1.Եկամուտների մասով***՝ 98,6 տոկոս: 2023 թվականի տարեկան բյուջեն եկամուտների գծով նախատեսվել է 2 465 431,5 հազար դրամ՝ փաստացի մուտքերը կազմել են 2 431 556,4 հազար դրամ:

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՊԼԱՆ 2023 ԹՎԱԿԱՆ

| Բյուջե | Գումարը (դրամ) | Տոկոսային հարաբերությունը |
|---|---|---|
| Վարչական | 1800743094 | 64.70% |
| Ֆոնդային | 982688404 | 35.30% |
| **Ընդամենը** | **2783431498** | |



# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆ

| Բյուջե | Գումարը (դրամ) | Տոկոսային հարաբերությունը |
|---|---|---|
| Վարչական | 1837856413 | 67.54 % |
| Ֆոնդային | 883296026,3 | 32.46 % |
| **Ընդամենը** | **2721152439** | |



***Տարեսկզբի ազատ մնացորդը*** կազմել է 449 059,9 հազար դրամ:

***2. Ծախսերի կատարման մասով*** բյուջեն կատարվել է 68,5 տոկոսով, նախատեսված 3 232 491,5 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 2 212 972,9 հազար դրամ:

***Վարչական բյուջեի եկամուտները*** 2023 թվականի համար համար նախատեսված 1 800 743,1 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 837 489,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 102,0 տոկոս:

-Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների (դոտացիա) գծով եկամուտները նախատեսված 1 270 161,1 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1 270 161,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 100 տոկոս, որից՝ պետական բյուջեից երաժշտական դպրոցում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար 2023 թվականի համար նախատեսված 1 525,0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1 525,2 հազար դրամ:

-Ցորենի տրամադրում (պետական աջակցության ծրագիր)՝ նախատեսված 147 604,6 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 147 604,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 100 տոկոս:

***Վարչական բյուջեի սեփական եկամուտների*** մասով՝ (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) նախատեսված 382 977,4 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտները կազմել է 419 723,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 110,0 տոկոսով:

***ա.Գույքային հարկեր անշարժ գույքից՝*** 2023 թվականի համար նախատեսված 73 087,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 65 647,7 հազար դրամ: Կատարողականը կազմել է 89,8 տոկոս:

***բ.Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝*** 2023 թվականի համար նախատեսվել է 185 783,0 հազար դրամ, հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է 191 738,8 հազար դրամ: Կատարողականը կազմել է 103,2 տոկոս:

***գ. Պետական տուրքեր***

Պետական տուրքերի գծով եկամուտները բյուջեով նախատեսված 8 800,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 9 614,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 109,2 տոկոս,այդ թվում՝

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար, նախատեսված 5 000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 4 220,8 հազար դրամ:Կատարողականը կազմում է 84,4 տոկոս:

- Նոտարական գործողությունների  համար նախատեսված 3 800,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 5 393,4 հազար դրամ: Կատարողականը կազմում 141,9 տոկոս:

***դ. Տեղական տուրքեր***

Տեղական տուրքերի գծով եկամուտները 2023 թվականի համար նախատեսված 13 460,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 15 002,8 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 111,5 տոկոսով:Այդ թվում՝

- Տեղական տուրք շենքերի, շինությունների շինարարության թույլտվության,
- Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի,
- Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի,
- Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված  նավթային գազերի,
- Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու,
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի,
- Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար:

***ե. Այլ եկամուտների մասով*** -Մուտքեր տուժերից, տուգանքներից նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 2 261,5 հազար դրամ:

-Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ այլ եկամուտներ հաշվետու ժամանակաշրջանի համար գումար նախատեսվել է 12 466,4 հազար դրամ, փաստացի կատարվել է 11 675,1 հազար դրամ:

- Գույքի (հողերի) վարձակալություն՝ նախատեսված 18 755,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 24 980,6 հազար դրամ: Կատարողականը կազմում է 133,2 տոկոս:

- Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման՝ ՔԿԱԳ առանձնացված ստորաբաժանման ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 2 000,0 հազար դրամ, ՀՀ պետական բյուջեից փաստացի ֆինանսավորվել է 1 999,0 հազար դրամ:

***զ.Վարչական գանձումների մասով համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց***՝ նախատեսված 68 026,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 96 803,6 հազար դրամ: Կատարողականը կազմում է 142,3 տոկոս, այդ թվում՝

- <u>աղբահանության վճարներ</u> նախատեսվել է 33 566,0 հազար դրամ, հավաքագրվել է 32 639,6 հազար դրամ: Կատարողականը կազմում է 97,2 տոկոս:

-<u>ծնողական միջոցներ</u> (նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներ, արտադպրոցական կրթություն՝ երաժշտական և գեղարվեստի դպրոցներ,մշակույթի տուն) նախատեսվել է 23 160,0 հազար դրամ, փաստացի կատարվել է 28 633,6 հազար դրամ, կատարողականը կազմում է 123,6 տոկոս:

-<u>այլ վարչական գանձումներ</u>՝ նախատեսվել 11 300,0 հազար դրամ, հավաքագրվել է 35 530,4 հազար դրամ:

2023 թվականի վարչական բյուջեի համամասնությունը ըստ եկամտատեսակների




Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 17 590,9 հազար դրամ:

***Ֆոնդային բյուջեի եկամուտներ***

Ֆոնդային բյուջեի եկամուտները նախատեսված 664 688,4 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 593 296,0 հազար դրամ, այդ թվում՝

- պետական բյուջեից սուբվենցիաների մասով՝ նախատեսված 619 080,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 562 286,1 հազար դրամ:

-անշարժ գույքի իրացման մասով՝ նախատեսված 25 500,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 27 104,5 հազար դրամ:

-կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (նվիրատվություն ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքներին)՝ նախատեսված 20 107,7 հազար դրամի դիմաց փաստացի նվիրաբերությունը կազմել է 20 107,7 հազար դրամ,որից

-10 484,5 հազար դրամը նվիրաբերվել է «Լեռնավան բնակավայրի ոռոգման համակարգի գեոմեմբրանային ջրամբարի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքներին և գումարը անմիջապես փոխանցվել է շինարարությունը կատարող կազմակերպությանը:

-5 717,7 հազար դրամը՝ «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի կողմից 2022 թվականի նվիրաբերված գումարի չօգտագործված մասի ետ վերադարձ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե 2023 թվականի համար նախատեսվել է հատկացում է կատարվել 318 000,0 հազար դրամ փաստացի կատարվել է հատկացում 290 000,0 հազար դրամ:

## 2023 թվականի ֆոնդային բյուջեի հավաքագրվող եկամուտների համամասնությունը



Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 431 469,0 հազար դրամ:

***Վարչական բյուջեի ծախսերը***՝ նախատեսված 1 818 334,0 հազար դրամի դիմաց կատարվել է 1 439 645,4 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 79,2 տոկոս: Այդ թվում՝

-***Ապարատի պահպանման ծախսեր***՝ նախատեսված 505 519,6 հազար դրամի դիմաց կատարվել է 367 008,0 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 72,6 տոկոս:

-***Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ***՝ նախատեսված 28 703,0 հազար դրամի դիմաց կատարվել է 12 555,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 43,7 տոկոս:

-***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ***՝ նախատեսված 24 800,0 հազար դրամի դիմաց կատարվել է 12 077,5 հազար դրամ: Կատարողականը կազմել է 48,7 տոկոս: Այդ թվում՝

-Լոռու մարզի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ:

-***Տնտեսական հարաբերություններ***՝ նախատեսված 231 340,6 հազար դրամի դիմաց կատարվել է 191 975,5 հազար դրամ: Կատարողականը կազմել է 83,0 տոկոս, այդ թվում՝

- գյուղատնտեսություն (անասնաբուժական ծառայություն) - նախատեսված 160 294,6 հազար դրամի դիմաց կատարվել է 157 714,6 հազար դրամ,որից ցորենի պետական աջակցության ծրագիր՝ 147 604,6 հազար դրամ:

-ճանապարհային տնտեսություն՝ նախատեսված 66 106,0 հազար դրամի դիմաց կատարվել է 33 167,6 հազար դրամ:

- էներգետիկա (արևայինի ֆակտորինգ) նախատեսված 1 440,0 հազար դրամի դիմաց կատարվել է 1 093,3 հազար դրամ:

- ոռոգում ՝ նախատեսված 3 500,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

-***Շրջակա միջավայրի պաշտպանություն***՝ նախատեսված 86 619,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 59 496,6 դրամ: Կատարողականը կազմել է 68,7 տոկոս, որից՝

- աղբահանություն՝ նախատեսված 63 919,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 56 668,2 հազար դրամ, կատարողականը կազմել է 88,7 տոկոս:

- կեղտաջրերի հեռացում՝ նախատեսված 2 500,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

- այլ ծախսեր՝ նախատեսված 20 200,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 2 828,4 հազար դրամ:

-***Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ***՝ նախատեսված 201 705,8 հազար դրամի դիմաց ծախսվել է 154 280,9 հազար դրամ: Կատարողականը կազմել է 76,5 տոկոս, որից՝

-Փողոցների լուսավորություն- 78 090,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 50 408,2 հազար դրամ: Կատարողականը կազմել է 64,6 տոկոս:

-Բնակարանների կոմունալ սպասարկում («Սպիտակի համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ) - նախատեսված 102 406,0 հազար դրամի դիմաց կատարվել է 91 305,2 հազար դրամ:

- Ջրամատակարարում՝ նախատեսված 21 209,8 հազար դրամի դիմաց կատարվել է 12 567,5 հազար դրամ:

- ***Հանգիստ, մշակույթ, սպորտ և կրոն*** («Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ սպորտային և համաքաղաքային միջոցառումների կազմակերպում) նախատեսված 102 679,1 հազար դրամի դիմաց կատարվել է 75 733,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 73,8 տոկոս, այդ թվում՝

- Համաքաղաքային և սպորտային միջոցառումների կազմակերպելու համար նախատեսվել է 40 400,4 հազար դրամ, փաստացի կատարվել է 23 341,8 հազար դրամ: «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ- նախատեսվել է 25 047,5 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 22 390,4 հազար դրամ: Կատարողականը կազմել է 89,4 տոկոս:

- «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ- նախատեսվել է 34 731,2 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 30 001,4 հազար դրամ:Կատարողականը կազմել է 86,4 տոկոս:

-Հուշարձանների պահպանում և վերանորոգում՝ նախատեսվել է 2 500,0 հազար դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

-***Կրթություն՝*** 299 766,9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 269 649,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 90,0 տոկոս (Նախադպրոցական կրթություն, արտադպրոցական կրթություն, միջնակարգ ընդհանուր կրթություն և բարձրագույն կրթություն):

- ***Սոցիալական պաշտպանությանն*** ուղղված ծախսերը նախատեսվել է 16 400,0 հազար դրամ՝ հատկացվել է 6 035,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 36,8 տոկոս:

- ***Ծերություն՝*** «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ–ի հետ համատեղ իրականացվող Սպիտակ քաղաքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի առաջնային սոցիալական խնդիրների

լուծմանն ուղղված ծրագրի համար (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ) նախատեսվել է 2 800,0 հազար դրամ՝ փաստացի հատկացվել է 833,3 հազար դրամ:

-***Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե 2023 թվականի նախատեսվել է հատկացնել 318 000,0 հազար դրամ, փաստացի հատկացվել է 290 000,0 հազար դրամ:***

2023 թվականի վարչական բյուջեի պլանավորված ծախսերի
տեսակարար կշիռը



***Ֆոնդային բյուջեի ծախսեր***

Ֆոնդային բյուջեով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 1 388 657,5 հազար դրամի ծախսեր, դրամարկղային ծախսը կազմել է 1 063 327,5 հազար դրամ, որից՝

-2023 թվականներ Քարածոր բնակավայրի կիսակառույց շենքի վերանորոգման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր ՝ 9 025,6 հազար դրամ:

- 2022 թվականի Կաթնաջուր բնակավայրի հուշահամալիրի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 844,8 հազար դրամ:

- 2022 թվականի Ծաղկաբեր բնակավայրի 1–ին փողոցի գաբիոնե շարվածքով հենապատի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր ՝ 7 137,6 հազար դրամ:

- 2021 թվական Գոգարան բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆով սալարկման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր ՝ 18 056,7 հազար դրամ:

-2022 թվականի Լեռնավան բնակավայրի 2-րդ փողոցի տուֆով սալարկման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 9 833,3 հազար դրամ:

-2022 թվականի Ծաղկաբեր բնակավայրի 3-րդ փողոցի տուֆով սալարկման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 745,25 հազար դրամ:

-2022 թվականի Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 17 487,12 հազար դրամ:

-2022 թվականի Արջիովիտ բնակավայրի ոռոգման ջրատարի վերանորոգման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 3 914,4 հազար դրամ:

-2022 թվականի Ծաղկաբեր բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 1 0 038,0 հազար դրամ:

-2022 թվականի Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 19 315,8 հազար դրամ:

-2022 թվականի Մեծ Պարնի բնակավայրի համայնքային այգու կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 8 329,0 հազար դրամ:

-2022 թվականի Շենավան բնակավայրի  ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 11 298,9 հազար դրամ:

-2022 թվականի Սարահարթ բնակավայրի  ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ  սուբվենցիոն ծրագիր՝ 19 656,0 հազար դրամ:

-2022 թվականի Լեռնավան բնակավայրի  ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 75 030,0 հազար դրամ:

-2022 թվականի Լեռնավան բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր ՝ 96 500,0 հազար դրամ:

-2022 թվականի Ջրաշեն բնակավայրի ճանապարհի տուֆով սալարկման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 16 578,0 հազար դրամ:

-2022 թվականի Լուսաղբյուր բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆով սալարկման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր 293,7 հազար դրամ:

-2022 և 2023 թվականների Ջրաշեն բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր՝ 8 944,5 հազար դրամ:

-2022 և 2023 թվականների Արևաշող բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր ՝ 6 442,2 հազար դրամ:

- 2022 թվականի Արջիովիտ բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 1 584, 0 հազար դրամ:

-2023 թվականի Շիրակամուտ բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 800,8 հազար դրամ:

-2023 թվականի Լեռնանցք բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 3 002,4 հազար դրամ:

-2023 թվականի Սպիտակ բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 13 164,6 հազար դրամ:

-2023 թվականի Մեծ Պարնի բնակավայրի Մշակույթի տան կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 36 203,0 հազար դրամ:

-2023 թվականի Նոր Խաչակապ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 8 371,0 հազար դրամ:

-2023 թվականի Լեռնավան բնակավայրի գեոմեմբրանային ջրամբարի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 24 463,8 հազար դրամ:

-2023 թվականի Հարթագյուղ, Ջրաշեն, Լեռնանցք և Շիրակամուտ բնակավայրերի թաղամասերի գազաֆիկացման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր՝ 53 293,7 հազար դրամ:

-2023 թվականի Սարալանջ, Ծաղկաբեր, Խնկոյան, Ջրաշեն, Նոր Խաչակապ և Սպիտակ բնակավայրերի ճանապարհների տուֆով սալարկման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր՝ 127 803,0 հազար դրամ:

-2023 թվականի Սպիտակ բնակավայրի բազմաբնակարանային շենքերի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 11 275,0 հազար դրամ:

-2023 թվականի Ս.Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 3 471,6 հազար դրամ:

-2023 թվականի Արևաշող բնակավայրի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ 2-րդ փուլ սուբվենցիոն ծրագիր՝ 19 322,0 հազար դրամ:

-2023 թվականի Լուսաղբյուր բնակավայրի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 9 679,7 հազար դրամ:

- 2023 թվականի Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 10 000,0 հազար դրամ:

-2023 թվականի Կաթնաջուր բնակավայրի հրապարակին հարակից տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 8 910,0 հազար դրամ:

-2023 թվականի Սպիտակ համայնքի քաղաքային զբոսայգու վերանորոգման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 26 512,1 հազար դրամ:

-2023 թվականի Սպիտակ համայնքի ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր՝ 74 762,6 հազար դրամ:

-2023 թվականի Սպիտակ համայնքի Կաթնաջուր, Լեռնավան, Սարամեջ, Գոգարան, Սարահարթ, Արջիովիտ, Գեղասար և Շենավան բնակավայրերի ոռոգման ներքին ջրագծերի ընդլայնման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրեր՝ 163 706,4 հազար դրամ:

-Ջրաշեն բնակավայրի ենթակայանի կառուցման աշխատանքներ՝ 4 999,6 հազար դրամ:

-Անվտանգության համակարգերի տեղադրման աշխատանքներ բնակավայրերի համար՝ 2 746,0 հազար դրամ:

-Համաֆինանսավորում Ջրաշեն բնակավայրի ֆուտբոլի մարզադաշտի ցանկապատի կառուցման համար՝ 3 200,0 հազար դրամ:

-Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության, որակի տեխնիկական հսկողության, հեղինակային հսկողության ծառայություններ և այլ աշխատանքներ՝ 91 761,5 հազար դրամ:

-Բնակավայրերի համար տաղավարների ձեռքբերում՝ 710,4 հազար դրամ:

-Բնակավայրերի համար խոտհնձիչների ձեռքբերում ՝ 990,0 հազար դրամ:

-Հովհանոցների ձեռքբերում՝ 200,0 հազար դրամ:

-Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի համար համակարգիչների, պահարանների,տեսախցիկի, տպիչ սարքերի, չիրկիզվող պահարանի, անխափան սնուցման սարքերի, գրասենյակային բազկաթոռների,ցանցային բաժանարարի, Ֆոտոնկարահանման խցիկի,սառնարանների և գազաբալոնի համակարգի ձեռքբերման համար՝ 10 348,5 հազար դրամ:

Արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և փողոցային լուսավորության ֆակտորինգներ՝ 12 574,9 հազար դրամ:

Անշարժ գույքի իրացումից մուտքեր՝ 27 104,5 հազար դրամ:

## 2023 թվականի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերի տեսակարար կշիռը



***ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ***

***ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***

✅ «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 31 122 480 ՀՀ դրամ, որից 55%՝ 17 117 364 ՀՀ դրամ՝ պետական, իսկ 45%՝ 14 005 116 ՀՀ դրամ՝ համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 7 033 700 ՀՀ դրամ, որից 55%՝ 3 868 535 ՀՀ դրամ՝ պետական, իսկ 45%՝ 3 165 165 ՀՀ դրամ՝ համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 3 545 900 ՀՀ դրամ, որից 55%՝ 1 950 245 ՀՀ դրամ՝ պետական, իսկ 45 %՝ 1 595 655 ՀՀ դրամ՝ համայնքային ներդրումն է:



✅ «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 7 568 400 ՀՀ դրամ, որից 55 %՝ 4 162 620 ՀՀ դրամ՝ պետական, իսկ 45 %՝ 3 405 780 ՀՀ դրամ՝ համայնքային ներդրումն է:



✅ «Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 1 841 400 ՀՀ դրամ, որից 55%՝ 1 012 770 ՀՀ դրամ՝ պետական, իսկ 45 %՝ 828 630 ՀՀ դրամ՝ համայնքային ներդրումն է:





**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

✅ «Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի գազատարի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 24 824 900 ՀՀ դրամ, որից 55%՝ 13 653 695 ՀՀ դրամը՝ պետական, 45%՝ 11 171 205 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի գազատարի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 46 823 700 ՀՀ դրամ, որից 55%՝ 25 753 035 ՀՀ դրամը՝ պետական, 45 %՝ 21 070 665 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




✅ «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի գազատարի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 34 507 800 ՀՀ դրամ, որից 55%՝ 18 979 290 ՀՀ դրամը՝ պետական, 45%՝ 15 528 510 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:



✅ «Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի գազատարի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 16 466 366 ՀՀ դրամ, որից 55%՝ 9 056 501 ՀՀ դրամը՝ պետական, 45%՝ 7 409 865 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





***ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ***
***ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ (I ՓՈՒԼ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***

✅ «Սպիտակ բնակավայրի քաղաքային զբոսայգու վերանորոգում» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 42 508 800 ՀՀ դրամ, որից 35%՝ 14 878 080 ՀՀ դրամը՝ պետական, 65%՝ 27 630 720 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




***ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***

✅ «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգման (ասֆալտապատումով) աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 35 734 932 ՀՀ դրամ, որից 45%՝ 16 080 720 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 19 654 212 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:

 

✅ «Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 18 393 210 ՀՀ դրամ, որից 45%՝ 8 276 944 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 10 116 266 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





____________________

✅ «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի բազմաբնակարանային շենքերի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 21 381 700 ՀՀ դրամ, որից 45%՝ 9 621 765 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 11 759 935 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 6 876 500 ՀՀ դրամ, որից 45%՝ 3 094 425 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 3 782 075 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:







✅ «Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 19 146 500 ՀՀ դրամ, որից 45%՝ 8 615 925 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 10 530 575 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




✅ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի հրապարակի հարակից տարածքի բարեկարգում և հենապատի կառուցում» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 16 925 900 ՀՀ դրամ, որից 45%՝ 7 616 655 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 9 309 245 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





***ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՒՖՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***

✅ «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի տուֆով սալարկման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7 469 500 ՀՀ դրամ, որից 60%՝ 4 481 700 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 2 987 800 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




✅ «Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի տուֆով սալարկման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքները:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 17 104 980 ՀՀ դրամ, որից 60%՝ 10 262 988 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 6 841 992 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:



✅ «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի տուֆով սալարկման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 60 566 948 ՀՀ դրամ, որից 60%՝ 36 340 168 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 24 226 779 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Սարալանջ բնակավայրի տուֆով սալարկման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 10 332 200 ՀՀ դրամ, որից 60%՝ 6 199 320 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 4 132 880 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





✅ «Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի տուֆով սալարկման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7 642 390 ՀՀ դրամ, որից 60%՝ 4 585 434 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 3 056 956 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




✅ «Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրի տուֆով սալարկման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 52 863 200 ՀՀ դրամ, որից 60%՝ 31 717 920 ՀՀ դրամը՝ պետական, 40%՝ 21 145 280 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




## *ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

✅ «Կաթնաջուր բնակավայրի ոռոգման ջրագծի պոմպակայանի տեղադրում, Լեռնավան բնակավայրի ոռոգման ցանցի ընդլայնում, Շենավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարամեջ բնակավայրի ոռոգման ջրամբարի վերանորոգում, Արջաhովիտ բնակավայրի ոռոգման ներքին ջրագծի ընդլայնում, Գոգարան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարահարթ բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում և պոմպակայանի վերանորոգում, Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում» սուբվենցիոն ծրագիր.

✔ Կաթնաջուր բնակավայրի ոռոգման ջրագծի պոմպակայանի տեղադրման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 44 546 100 ՀՀ դրամ, որից 65%՝ 28 954 965 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 15 591 135 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





✔ Լեռնավան բնակավայրի ոռոգման ցանցի ընդլայնման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 26 745 300 ՀՀ դրամ, որից 65%՝ 17 384 445 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 9 360 855 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:






- Շենավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 17 656 500 ՀՀ դրամ, որից 65%՝ 11 476 725 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 6 179 775 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





- Սարամեջ բնակավայրի ոռոգման ջրամբարի վերանորոգման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 38 686 900 ՀՀ դրամ, որից 65%՝ 25 146 485 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 13 540 415 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:



✔ Արջիովիտ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 14 753 300 ՀՀ դրամ, որից 65%՝ 9 589 645 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 5 163 655 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





- Գոգարան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում  18 557 400 ՀՀ դրամ, որից 65%՝ 12 062 310 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 6 495 090 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





- ✓ Սարահարթ բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում և պոմպակայանի վերանորոգման աշխատանքները,

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում  40 381 200 ՀՀ դրամ, որից 65%՝ 26 247 780 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 14 133 420 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:



- ✔ Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 29 515 600 ՀՀ դրամ, որից 65%՝ 19 185 140 ՀՀ դրամը՝ պետական, 35%՝ 10 330 460 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




***Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի նոր ավտոկայանատեղիի կառուցում և Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի տան ներքին հարդարում, Քարաձոր բնակավայրի ժամանցի կենտրոնին կից խոհանոցի կառուցում»***

«Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի տան ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 67 555 900  ՀՀ դրամ, որից  45%՝ 30 400 155  ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 37 155 745  ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:



✔Ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի նոր ավտոկայանատեղիի կառուցում:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 189 138 800 ՀՀ դրամ, որից 45%՝ 85 112 460 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 104 026 340 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:





Ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող Քարաձոր բնակավայրի ժամանցի կենտրոնին կից խոհանոցի կառուցում» ծրագրի:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 17 200 740 ՀՀ դրամ, որից 45%՝ 7 740 333 ՀՀ դրամը՝ պետական, 55%՝ 9 460 407 ՀՀ դրամը համայնքային ներդրումն է:




✅ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Բաղադրիչ 2» ծրագրի շրջանակում Սպիտակ համայնքի կողմից ներկայացված «Սպիտակ խոշորացված համայնքում կոմունալ և սանիտարական պայմանների բարելավում» ծրագրով համայնքը ձեռք է բերել

- ✔ 1 բազմաֆունկցիոնալ ճանապարհային մեքենա (МАЗ-6912С3-310)
- ✔ 1 ինքնաթափ մեքենա (МАЗ- 457121-537-000),
- ✔ նոր մոդելի 500 աղբարկղեր:

❗ Ծրագրի ընդհանուր արժեքը 278 425 000 ՀՀ դրամ է, որից համայնքի ներդրումը կազմում է 13 921 250 ՀՀ դրամ (5 %):





Սպիտակ համայնքում շարունակվում են նոր աղբարկղերի խմբաքանակների ձեռքբերման աշխատանքները:

Ձեռք են բերվել 60 հատ աղբարկղ, հատկացվել է 2 975 000 դրամ:





Սպիտակի համայնքապետարանը Սպիտակ քաղաքի, Շենավան, Ջրաշեն, Լեռնանցք, Սարամեջ, Արևաշող, Գոգարան, Լուսաղբյուր, Սարահարթ, Գեղասար, Շիրակամուտ, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Ծաղկաբեր և Հարթագյուղ բնակավայրերի համար ձեռք է բերել և տեղադրել թվով 35 նստարաններ և 10 աղբամաններ:

Հատկացվել է 3 674 999 դրամ:





Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման գործընթացի ապահովման նպատակով Սպիտակ համայնքի Սարամեջ, Արջիովիտ, Կաթնաջուր, Ծաղկաբեր և Հարթագյուղ բնակավայրերում կատարվել են ազդարարման սարքավորումների (էլեկտրաշչակներ) տեղադրման աշխատանքներ: Հատկացվել է 1 440 000 դրամ:





Սպիտակ համայնքում ճանապարհների ընթացիկ սպասարկման շրջանակներում կատարվել են
Ալեք Մանուկյան, Թորոսյան, Նորայր Աճեմյան և Շահումյան փողոցների հետիոտնային անցումների գծանշման
աշխատանքներ: Հատկացվել է 930 600 դրամ:





Սպիտակ համայնքում իրականացվել են ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ:
Հատկացվել է 31 206 289 դրամ:








Սպիտակ համայնքի բնակավայրերում կատարվել են գիշերային լուսավորության համակարգերի նորոգման աշխատանքներ. հին և այրված լամպերը փոխարինվել են նոր լամպերով:
Հատկացվել է 11 770 276 դրամ:





«Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի կարիքների համար էներգախնայող LED լուսատուների ձեռքբերում» ծրագրի աշխատանքները:

✔Ծրագրի շրջանակում փողոցային հին լուսատուները փոխարինվում են 270 նոր, 80 վատ հզորության էներգախնայող լուսատուներով:

✔Արդեն ավարտվել են Շահումյան փողոցի լուսավորության արդիականացման աշխատանքները:

❗Ծրագրի ընդհանուր արժեքը 5 469 471 դրամ է:





Սպիտակ համայնքի բնակավայրերում քլորացման միջոցով կատարվել են խմելու ջրի վարակազերծման ընթացիկ աշխատանքներ: Սանիտարատեխնիկական միջոցառումների նպատակը խմելու ջրի մեջ թափանցող մանրէների ոչնչացումն է: Այն միտված է խմելու ջուրը դարձնել անվտանգ, ինչը բխում է ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներից: Հատկացվել է 3 144 000 դրամ:





***Չափագրման ծառայությունների ձեռք բերում***

Ձեռք է բերվել 36 միավոր անշարժ գույքի չափագրման հաշվետվություն ( 5.982 հա ընդհանուր մակերեսով հողամաս, արդյունաբերական օբյեկտներ 0.62525 հա, բնակելի կառուցապատման 0.3835 հա, հասարակական կառուցապատման 0,38626 հա, գյուղատնտեսական 4.57307 հա, բնակավայրերի այլ հողեր 0.0143 հա) ծառայությունների ձեռք բերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 1 948 000 ՀՀ դրամ:

***Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում***

Ձեռք է բերվել «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի թաղամասերի գազաֆիկացում», «Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի թաղամասերի գազաֆիկացում», «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում համայնքային պուրակի կառուցում», «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով», «Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնում», «Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի խմելու ջրի ցանցի ընդլայնում», «Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրի խմելու ջրի ցանցի մասնակի վերանորոգում»,« Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում»,« Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի խմելու ջրի ցանցի ընդլայնում», «Սպիտակ համայնքի Սարալանջ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում», «Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի ջրամբարների կառուցում», «Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում և ընդլայնում», «Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի ոռոգման համակարգի վերանորոգում», «Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման ջրամբարի կառուցում»,« Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում»,« Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի ջրամբարի կառուցում», «Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում», «Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրի գերեզմանատուն տանող կենտրոնական ճանապարհի ասֆալտապատում», «Սպիտակ բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով»,« Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի փողոցի սալարկում տուֆ քարով, ջրահեռացումով», «Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի բժշկական կենտրոն տանող ճանապարհի ասֆալտապատում»,«Սպիտակ

համայնքի Գեղասար բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով», «Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով», «Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրի փողոցի սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով»,« Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով», «Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով»,« Սպիտակ բնակավայրի Քըրք Քըրքորյան փողոցի ասֆալտապատում»,«Սպիտակ բնակավայրի Այգեստան փողոցի ասֆալտապատում», «Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրի կենտրոնական փողոցի ասֆալտապատում»,«Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրի խմելու ջրի ջրհավաք ավազանի և ջրագծերի կառուցում», «Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի փոխարինում», «Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում»,«Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 17 346 480 ՀՀ դրամ:
2023թ. ընթացքում Սպիտակի համայքնապետարանի կողմից տրամադրվել է 73 ճարտարապետահատակագծային առաջադրանք և 65 շինարարության թույլտվություն, որից 33-ը սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար, 32-ը տրամադրվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց, որից 9-ը հասարակական, 20 բնակելի և 3 արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար: Տրամադրվել է 5 ավարտական ակտ, որից 3-ը բնակելի կառուցապատման, 2-ը հասարակական օբյեկտների: 2023թ. ընթացքում օրինականացվել է 121 ինքնակամ կառույց, որից 16 –ը (13 բնակելի, 1 արտադրական և 2 հասարակական նշանակության) համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վրա, 105-ը իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողերի վրա:
121 ինքնակամ կառույցի օրինականացումից համայնքի բյուջե գանձվել է 33 293 779 ՀՀ դրամ:
Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված 16 ինքնակամ կառույցներ օրինականացվել և գնման նախապատվության իրավունքով օտարվել են կառույցներն իրականացրած անձանց, օրինականացված գույքի օտարումից բյուջեի մուտքը կազմել 3 925 475 ՀՀ դրամ:

***Տնակների հաշվառում***

Սպիտակ համայնքում ըստ բնակավայրերի՝ ՀՀ կառավարության 29.03.2018թ. թիվ 361-Ն որոշման պահանջների համաձայն, կատարվել է համայնքի վարչական տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների, ինչպես նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ժամանակավոր կացարանների (տնակների) բնակության նպատակով զբաղեցված ոչ հիմնական շինությունների փաստագրման աշխատանքներ: Արդյունքում փաստագրվել է ըստ բնակավայրերի 2054 ոչ հիմնական շինություն, որից՝

Սպիտակ քաղաք -1278

Լեռնացք բնակավայր-49

Քարաձոր բնակավայր-23

Կաթնաջուր բնակավայր-90

Արևաշող բնակավայր-87

Արջիովիտ բնակավայր-32

Գեղասար բնակավայր-50

Լեռնավան բնակավայր-52

Լուսաղբյուր բնակավայր-47

Խնկոյան բնակավայր-3

Ծաղկաբեր բնակավայր-7

Հարթագյուղ բնակավայր-22

Շիրակամուտ բնակավայր-35

Շենավան բնակավայր-8

Մեծ Պարնի բնակավայր-34

Սարալանջ բնակավայր-2

Սարահարթ բնակավայր-27

Սարամեջ բնակավայր -58

Նոր Խաչակապ բնակավայր-18

Գոգարան բնակավայր -36

Ջրաշեն բնակավայր-96

Փաստագրված տնակների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ Լոռու մարզպետարան:

***Բնակարանների (բնակելի փների) մասնավորեցում***

2023թ. ընթացքում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված և բնակիչներին հատկացված, սակայն համայնքի սեփականություն հանդիսացող 19 բազմաբնակարան շենք և 4 բնակելի տուն (կառուցված՝ «Վարպետաց թաղամասում»)՝ նվիրատվությամբ փոխանցվել են դրանք տիրապետողներին:

# ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուսումնական տարում Սպիտակ համայնքում գործող 1 ավագ, 17 միջնակարգ, 10 հիմնական դպրոցներ հաճախում է 4625 աշակերտ, /237 երեխա հաճախում է նախակրթարան/: Հանրակրթության համակարգում ունենք շուրջ 975 աշխատող: Առաջին դասարան է հաճախում 436 աշակերտ, ավագ դպրոցի աշակերտների թիվը 187 է: Համայնքապետարանն ակտիվորեն համագործակցում է հանրակրթական դպրոցների հետ: Համայնքապետարանի օժանդակությամբ մշտապես իրականացվում են կրթության բարելավման ծրագրեր: Ամեն տարի հավուր պատշաճի տոնվում է Գիտելիքի օրը, Ուսուցչի տոնը, Վերջին զանգը, Ամանորը և Սուրբ Ծնունդը:

Համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցներն ընդգրկված են դպրոցների կառավարման խորհուրդներում:

Դպրոցականներն ակտիվորեն մասնակցում են համաքաղաքային միջոցառումներին:

***<u>Նախադպրոցական ուսումնական հաստատություններ</u>***

«Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ, գործում է 2 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 60, տարեկան միջին հաճախումը՝ 54, աշխատողների ընդհանուր թիվը՝ 15:

2023թ.-ի համայնքի բյուջեով նախատեսվել է 27395.4 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 26395.6 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է ՝

- Աշխատավարձ – 16211.4 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 1 784.8 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար – 98.5 հազար ՀՀ դրամ
- Սննդի ձեռք բերման գումար – 5696.1 հազար ՀՀ դրամ
- Այլ ծախսեր – 2605.6 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 999.8 հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 439.9 հազար ՀՀ դրամ: 2023թ.-ի ծախսերի կատարողականը կազմել է 96.3%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 3137.1 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5.0 հազար ՀՀ դրամ/:




***«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ***, գործում է 6 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 180, տարեկան միջին հաճախումը՝ 176, աշխատողների ընդհանուր թիվը՝ 31:
2023թ.-ի համայնքի բյուջեով նախատեսվել է 62356.0 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 61537.7 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ - 38672.8 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – մանկապարտեզը էլեկտրաէներգիա է ստանում տեղադրված արևային կայանից,
- Կոմունալ ծառայությունների վճար – 312.1 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռք բերման գումար 19575.6 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր- 2977.2 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 818.3  հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 341.9 հազար ՀՀ դրամ: 2023թ.  ծախսերի կատարողականը կազմել է 98.7%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 10320.5 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5.0 հազար ՀՀ դրամ/:




***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի «Համմիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ***-ը գործում է 2 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը 55, տարեկան միջին հաճախումը՝ 39, աշխատողների թիվը՝ 13: 2023 թվականի համայնքի բյուջեով նախատեսվել է 20996.8 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 20875.8 հազար ՀՀ դրամ,որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 15328.7 հազար ՀՀ դրամ
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 678.3 հազար ՀՀ դրամ
- Կոմունալ ծառայությունների վճար – 13.2 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռք բերման գումար – 3472.6 հազար ՀՀ դրամ
- Այլ ծախսեր – 1383.0 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 121.0  հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է՝ 379.6 հազար ՀՀ դրամ: 2023 թվականի կատարողականը կազմել է 99.4%: 2023թ-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 2116.0 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց/յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ամսեկան 4.0հազար ՀՀ դրամ/:




***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնու մանկապարտեզ» ՀՈԱԿ***, գործում է 2 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 45, տարեկան միջին հաճախումը՝ 31, աշխատողների ընդհանուր թիվը՝ 11: 2023թ.-ի համայնքի բյուջեով նախատեսվել է 24 308.9 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 19 167.4 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ - 12 713.6 հազար ՀՀ դրամ,
- Վարձավճար (գազ) – 1 042.8 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար - 30.0 հազար ՀՀ դրամ, (մանկապարտեզը էլեկտրաէներգիա է ստանում տեղադրված արևային կայանից)
- Սննդի ձեռք բերման գումար – 3 602. 5 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր- 1 778.5 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 5141.5 հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 425.9 հազար ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 78%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 2 144 700 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 4.0 հազար ՀՀ դրամ/:





***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ »ՀՈԱԿ***, գործում է 2 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 38 , տարեկան միջին հաճախումը՝ 34, աշխատողների ընդհանուր թիվը՝ 10:

2023թ.-ի համայնքի բյուջեով նախատեսվել է 21399.2 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 19795.3 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 12000.0 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճարը վճարել է համայնքապետարանը, գտնվում է նույն շենքում,
- Կոմունալ ծառայությունների վճար – 90.0 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռք բերման գումար – 3718.7  հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր- 3986.6  հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 1604.0  հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 521,0 հազար ՀՀ դրամ:
2023թ.  ծախսերի կատարողականը կազմել է 92.5%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 1673.6 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 4.0 հազար ՀՀ դրամ/:





***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ***, գործում է 2 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 37, տարեկան միջին հաճախումը՝ 32, աշխատողների ընդհանուր թիվը՝ 9: Մանկապարտեզը գործում է 2022 թ. սեպտեմբերի 1-ից: 2023թ համայնքի բյուջեով նախատեսվել է 18920.8 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 15963.6 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 8803.4 հազար ՀՀ դրամ,
- Վարձավճար (գազ) – 450.7 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռքբերման գումար – 3052.4 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր - 3657.1 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 2957.2 հազար ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 84.4%:Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 431.5 հազար ՀՀ դրամ: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 1053.6 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 4.0 հազար ՀՀ դրամ/:



***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ*** - Գործում է 1 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 18, տարեկան միջին հաճախումը՝ 15, աշխատողների ընդհանուր թիվը՝ 7: Մանկապարտեզը գործում է 2022 թ. հունիսի 1-ից:
Համայնքի բյուջեով 2023թ. նախատեսվել է 12076.5 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 11739.7 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 7612.0 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 720.9 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար 33.0 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռք բերման գումար – 1616.0 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր- 1757.8 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 336.8 հազար ՀՀ դրամ:Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 652.2 ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 97%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 544.8 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 4,0 հազար ՀՀ դրամ/:





***«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակամուտի «Արեվիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ***, գործում է 1 խմբով, հաստատություն հաճախող երեխաների թիվը՝ 24, տարեկան միջին հաճախումը՝ 20, աշխատողների ընդհանուր թիվը՝ 7: 2023թ համայնքի բյուջեով նախատեսվել է 14812.9 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 12465.6 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 9026.6 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 553.9 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար – 5.0 հազար ՀՀ դրամ,
- Սննդի ձեռք բերման գումար – 1338.4 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր- 1541.7 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 2347.3 հազար ՀՀ դրամ: Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 519. 4 հազար ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 84%: 2023թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 889.0 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 4.0 հազար ՀՀ դրամ/:





## ***Արտադպրոցական ուսումնական հաստատություններ***

***«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ*** - սովորում է 125 աշակերտ, աշխատողների ընդհանուր թիվը՝ 12, որից 8-ը՝ ուսուցիչներ, դասարանների թիվը՝ 16:
2023թ.-ի համայնքի բյուջեով՝ 16980.5 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 15916.1 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 14071.5 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 960.9 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար – 40.3 հազար ՀՀ դրամ
- Այլ ծախսեր – 843.4 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 1064.4 հազար ՀՀ դրամ աշխատավարձի, էներգետիկ ու կոմունալ ծախսերի կրճատմամբ:
Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 127.3 հազար ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 93.73 %: 2023թ.-ին գանձվել է 1982.1 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2.0 հազար ՀՀ դրամ/:





***«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ***-ում սովորում է 178 աշակերտ, աշխատողների ընդհանուր թիվը՝ 24, որից 19-ը՝ ուսուցիչներ: Պետական աջակցությամբ վարձավճարի փոխհատուցմամբ փողային բաժնում սովորում է 1 աշակերտ, լարային բաժնում՝ 4 աշակերտ: 2023թ. համայնքի բյուջեով՝ 44469,0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է ՝ 44061.0 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 39854.0 հազար ՀՀ դրամ,
- Էներգետիկ ծառայությունների վարձավճար – 401.7 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար – 42.5 հազար ՀՀ դրամ
- Այլ ծախսեր – 3762.8 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 408.0 հազար ՀՀ դրամ՝ էներգետիկ, ջեռուցման, կոմունալ և կապի ծախսերի կրճատմամբ: Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 247.5 հազար ՀՀ դրամ: 2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 99.0 %: 2023թ.-ին գանձվել է 3045.0 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2.0 հազար ՀՀ դրամ/:




***«Շիրակամուտի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ*** - սովորում է  46  աշակերտ, աշխատողների ընդհանուր թիվը՝ 11, որից 9-ը՝ ուսուցիչներ: Պետական աջակցությամբ վարձավճարի փոխհատուցմամբ ազգային նվագարանների բաժնում սովորում է 2 աշակերտ, լարային բաժնում՝ 0 աշակերտ:

2023թ.-ի համայնքի բյուջեով՝  21791.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է  21040,8 հազար ՀՀ դրամ, որից վճարվել է ՝

- Աշխատավարձ – 18007.9 հազար ՀՀ դրամ,
- Էլեկտրաէներգիայի վարձավճար – 403.3 հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր 2629.7 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 750.2 հազար ՀՀ դրամ, աշխատավարձի, շրջագայությունների,էներգետիկ ու կոմունալ ծախսերի կրճատմամբ:
Մեկ սովորողի ամսական  փաստացի ծախսը կազմել է 457.4 հազար ՀՀ դրամ:
2023թ. ծախսերի կատարողականը կազմել է 96.5 %: 2023թ.-ին գանձվել է 565.6 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2.0 հազար ՀՀ դրամ/:

 

***«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ*** **-** Մշակույթի տանը գործում են երգի, պարի, մանկական թատերական 3  խմբեր՝ 50 սաներով, աշխատակիցների թիվը՝ 17: 2023թ.-ի  համայնքի բյուջեով  34731.2 հազար ՀՀ դրամ: Փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 30001.3 հազար ՀՀ  դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ – 25334.3  հազար ՀՀ դրամ,
- Էներգետիկ ծառայություններ – 2584.3 հազար ՀՀ դրամ,
- Կոմունալ ծառայությունների վճար - 171.5  հազար ՀՀ դրամ,
- Այլ ծախսեր -  1911.2 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է 4729.9 հազար ՀՀ դրամ: 2023 թ. կատարողականը կազմել է 86.3%: 2023թ.-ին գանձվել է 1100.0 հազար ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2.0 հազար ՀՀ դրամ/:





## *«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ*

Աշխատակիցների թիվը 18, որից 2-ը թանգարանային բաժնում, 2-ը գյուղական բնակավայրերում: Գրադարանի գործունեությունն ապահովելու համար 2023թ.-ի համայնքի բյուջեով նախատեսվել է 25047.5 հազար ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 22390.4 հազար դրամ, որից վճարվել է՝

- Աշխատավարձ՝ 20740.0 հազար ՀՀ դրամ,

Տնտեսվել է՝ 2657.1 հազար ՀՀ դրամ, որից աշխատավարձի գծով՝ 2541.0 հազար ՀՀ դրամ: 2023թ. գրադարանի հավաքածուն կազմում է 46344: Գրքերի թիվը աճել է 540 օրինակով: Ընթերցողների թիվը կազմում է 2834, գրքատացքը 50310, հաճախումների թիվը 39568, 16 օրինակ տեսա-լսողական նյութեր, լրակազմ՝ 239 օրինակ 132 անուն ամսագրեր: Բնակչության գրքապահովածությունը 13,3%, միջին հաճախումը 15,5%, միջին ընթերցանությունը 19,7%, գրքի միջին շրջանառությունը 1,5%:
Թանգարանային բաժնի ցուցանմուշների թիվը ավելացել է 4 միավորով և կազմում է 261, գիտաօժանդակ նյութերի թիվը՝ 1561: Թանգարանային բաժնի այցելուների թիվը 4002, որից 331-ը՝ արտասահմանցիներ: 2023 թվականին կազմակերպվել է կրթաճանաչողական, ուսուցողական, կադրերի վերապատրաստման, մասնագիտական զարգացման տարբեր տեսակի ու ձևի միջոցառումներ՝ հանդիպման երեկոներ, մրցույթներ, ընթերցանության շաբաթներ, գրական-գեղարվեստական երեկոներ, գրական, ինտելեկտուալ խաղեր, որոնց շնորհիվ բարելավվել է ընթերցողներին մատուցվող ծառայությունների որակը, ի հայտ է եկել աշխատանքի նոր հեռանկարներ, նոր կարող ուժ, կրթական, տեղեկատվական, մշակութային ծառայութուններ:
Ընթերցողների համար կազմակերպվել են արտագնա միջոցառումներ նախադպրոցական կազմակերպություններում, մշակույթային այլ կազմակերպություններում: Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում՝ Երևանում, Վանաձորում, կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի ՀՀ պատմամշակութային տարբեր հուշարձաններ՝ ճանաչողական նպատակով:
Տարիներ շարունակ գրադարանը համագործակցում է քաղաքի բոլոր կրթօջախների հետ՝ դպրոցների, նախադպրոցական հաստատությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ՝ ISOC ինտերնետ կառավարման հայկական դպրոցի, «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական

կազմակեպության, «Առաքելություն Հայաստան ԲՀԿ Սպիտակի ցերեկային կենտրոնի, «Հայկական գրադարանային ասոցացիայի», ՀՀ պատմության թանգարանի, Շիրակի երկրագիտական թանգարանի, Վանածորի Ստեփան Զորյանի անվան տուն-թանգարանի, Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, Սպիտակի տարեցների խնամքի կենտրոնի, Սպիտակի աշուղական դպրոցի, «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի, Սպիտակի «Հեքիաթների աշխարհ» թատերախմբի, Հայ արվեստի տուն գրական-երաժշտական ՀԿ-ի, Ղարաբաղյան պատերազմի վետերանների և տարբեր հրատարակչությունների հետ: Շարունակական բնույթ են կրում գրադարանային շաբաթները, գիրք նվիրելու օրը, թանգարանային գիշերները և այլն: 2023 թվականին կազմակերպվել են միջոցառումներ նվիրված՝ Հայոց բանակի կազմավորման 31-ամյակին, Գրքատոնին, Պոեզիայի միջազգային օրվան, Ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում՝ «Գրադարանը կրթության բաց հարթակ», Թանգարանների միջազգային օրվան, Սպիտակի օրվան, Երիտասարդների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության շրջանակներում՝ «Հայկական ավանդական հարսանիք», 44_օրյա պատերազմի հերոսներին, Ուսանողների միջազգային օրվան, Հաշմանդամների միջազգային օրվան և այլն:




***«Սպիտակ համայնքի բնակարանների  և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ,***

2023թ.-ի համայնքի բյուջեով  նախատեսվել է 102 406.0 հազար ՀՀ դրամ: Փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 91 305.18 հազար ՀՀ  դրամ, որից վճարվել է՝

Աշխատավարձ- 56 456.85  հազար ՀՀ դրամ,
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում– 29 374.24 հազար ՀՀ դրամ,
Հիմնական միջոցներ- 5 474.09 հազար ՀՀ դրամ

Տնտեսվել է 11 100.82  հազար ՀՀ դրամ: 2023թ.-ի կատարողականը կազմել է 89.15%:

Համայնքում իրականացված կրթական, մշակութային, երիտասարդական միջոցառումներ

***Տյառնընդառաջի միջոցառում***

Տյառընդառաջին, եկեղեցական արարողությունից հետո եկեղեցու բակում վառվեց խարույկը, այնուհետև ներկաներին բաժանվեց տոնի խորհրդանիշ համարվող քաղցրավենիք: Պարային կատարումներով հանդես եկան «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի սաները: Միջոցառման կազմակերպման համար ծախսվել է 23 560 ՀՀ դրամ:




## ***Մարտի 8***

Տոնական տորթեր և շնորհավորական բացիկներ հանձնվեցին Մարտի 8-ի կապակցությամբ  համայնքում գործող բոլոր համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, ուսումնական հաստատություններին, բանկերին և այլ կազմակերպություններին: Միջոցառման կազմակերպման համար ծախսվել է 425 100 ՀՀ դրամ:





## *Հայոց Ցեղասպանության 108-րդ տարելիցը*

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին, Սպիտակի Սուրբ Հարություն եկեղեցու բակում կանգնեցված Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ կատարվել է Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ: Հուշարձանին խոնարհվել են ծաղիկներ և ծաղկեպսակ: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 60 000 ՀՀ դրամ:



## ***Քաղաքացու օր***

Ապրիլի 29-ին տեղի ունեցան Քաղաքացու օրվա տոնական միջոցառումները: Քաղաքացու օրը մեկնարկեց «Սպիտակի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի սաների երաժշտական կատարումներով: Տեղի ունեցավ հանրային քննարկում, որին մասնակցում էին նախապես ընտրված 14-21 տարեկան թվով 30 պատանիներ և երիտասարդներ, միջոցառմանը զուգահեռ տոնական օրվա ընթացքում անցկացվեց ձեռքի աշխատանքների բացօթյա ցուցադրություն՝ մասնակցությամբ համայնքի բոլոր մանկապարտեզների, «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների և սաների, Սպիտակի խնամքի տան և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ շահառուների: Օրվա տոնական տրամադրությունը ապահովվեց սաքսոֆոնահարի կենդանի կատարումը: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 83 000 ՀՀ դրամ:




## *«Վերջին զանգ»*

Մայիսի 26-ին ՀՀ հանրակրթական դպրոցների բոլոր շրջանավարտների համար հնչեց դպրոցական «Վերջին զանգը»: Սպիտակ համայնքում այս տարի 9-րդ դասարանն ավարտեց 384 աշակերտ, 12-րդ դասարանը՝ 232 շրջանավարտ: Բոլոր ավարտական դասարաններին համայնքապետարանի կողմից հատկացվեցին 30 000-ական ՀՀ դրամ և շնորհավորական բացիկներ, իսկ 9-րդ դասարանցիներին՝ տոնական տորթեր և կրկին բացիկներ: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 905 400 ՀՀ դրամ:





## *Երեխաների պաշտպանության օր*

Միջոցառումները մեկնարկեցին Սպիտակի քաղաքային հրապարակում, տեղի ունեցավ տոնական համերգ «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի, «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի և «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների մասնակցությամբ: Համերգին զուգահեռ հրապարակում ներկայացված էր «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի սաների աշխատանքերի ցուցահանդեսը: Տոնական օրը ամփոփվեց լարախաղացի ելույթով: Կազմակերպված միջոցառումների համար հատկացվել է 618 000 ՀՀ դրամ:





## «ՍՊԻՏԱԿԻ ՕՐ»

«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի բակում կազմակերպվել էր համերգ, որտեղ կատարումներով հանդես եկան «Սպիտակի մշակույթի տուն» և «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն», «Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների և Սպիտակի երիտասարդների տան սաները: Կազմակերպվել էր աշխատանքների ցուցադրություն, որին մասնակցում էին համայնքի բոլոր ՀՈԱԿ-ները: Երեկոյան տեղի ունեցավ «AM Project» խմբի համերգը: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 3 848 400 ՀՀ դրամ:






***Քրիսփոսի Պայծառակերպության փոն «Վարդավառ»***

Հուլիսի 16-ին Սպիտակի կենտրոնական հրապարակում ժողովրդական երգ-երաժշտության ներքո մեկնարկեց ուրախ ջրոցին: Ներկաներին հյուրասիրվեց պաղպաղակ և կազմակերպվեց փրփուր-փարթի:Համայնքապետարանի կողմից ձեռք բերվեցին վարդավառի համար նախատեսված տարաներ: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 158 600 ՀՀ դրամ:





***Ինտելեկտուալ խաղ-մրցույթ և Color Festival երիտասարդների միջազգային օրը***

Այն իրականություն դարձավ Սպիտակի համայնքապետարանի, «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի համատեղ ջանքերով: Համայնքապետարանի կողմից ձեռք բերվեցին գրքեր, գունավոր փոշու փաթեթներ և DJ-ի ծառայություն: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 375 790 ՀՀ դրամ:





## *Աստվածածնի վերափոխման տոն*

Օգոստոսի 13-ին նշվեց Աստվածածնի վերափոխման տոնը: Տեր Օվսե քահանա Հովհաննիսյանի ձեռամբ կատարվեց խաղողօրհնեք:Պատարագից հետո եկեղեցու բակում ներկաներին բաժանվեց Սպիտակի համայնքապետարանի կողմից ձեռք բերված խաղող և  քաղցրավենիք: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է  52 500 ՀՀ դրամ:




## *Գիտելիքի և դպրության օր*

Նոր ուսումնական տարվա և Գիտելիքի օրվա առթիվ համայնքի բոլոր դպրոցներում կազմակերպել են միջոցառումներ, առաջին դասարանների դասվարներին հանձնվել են ծաղիկներ և շնորհավորական բացիկներ: Կազմակերպված միջոցառումների համար հատկացվել է 275 500 ՀՀ դրամ:





***Հարգանքի տուրք 1988 թվականի երկրաշարժի զոհերի հիշատակին***

Սպիտակ համայնքի Հուշարձանների պուրակում տեղի է ունեցել միջոցառում՝ ի հիշատակ 35 տարի առաջ, դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի զոհերի: Ծաղկեպսակ և ծաղիկներ են խոնարհվել Հուշարձանների պուրակում և Սպիտակ համայնքի բնակավայրերում: Միջոցառման ընթացքում հնչեց երաժշտություն՝ «Իվենթս» ստուդիայի լարային քառյակի կատարմամբ: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 791 300 ՀՀ դրամ:





## *Ամանորը Սպիտակում*

Դեկտեմբերի 26-ին Սպիտակի կենտրոնական հրապարակում կազմակերպվել էր գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողությունը, որի շրջանակում կազմակերպվել էր ամանորյա համերգ: Համայնքի դպրոցների բոլոր առաջին դասարանցիներին, ՆՈՒՀ-երի փոքրիկներին և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաներին բաժանվել են նվեր-տոպրակներ:
Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 1 186 000 ՀՀ դրամ:




# Սպորտային միջոցառումներ

***«Սպորտլանդիա»***

Մարտի 23-ին և 24-ին Սպիտակի «Մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվեց Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության դպրոցների 1-3-րդ դասարանների և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային փուլը: Պարգևատրման արարողության համար համայնքապետարանի կողմից ձեռք էր բերվել շնորհակալագրեր և շնորհակալագրերի շրջանակներ: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 23 560 ՀՀ դրամ:





## «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԱՎԱԹ-2023» ՖՈՒՏԶԱԼԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐ

Հունիսի 29-ին մեկնարկած «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2023» ֆուտզալի փոխանցիկ գավաթ մրցաշարի մասնակից թիմերն ըստ զբաղեցրած տեղերի պարգևատրվեցին 300 000, 200 000 և 100 000 ՀՀ դրամներով, բոլոր թիմերը Սպիտակի համայնքապետարանի կողմից ստացան նվեր գնդակներ: Հաղթող թիմը համայնքի ղեկավար Քաջայր Նիրկողոսյանի կողմից ստացավ «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2023» ֆուտզալի փոխանցիկ գավաթը: Պարգևատրվեցին նաև մրցաշարի լավագույն ռմբարկուն, լավագույն խաղացողը, լավագույն դարպասապահը և մրցաշարի մրցավարական կազմը: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 862 500 ՀՀ դրամ:




### *Համահայկական ամառային 8-րդ խաղեր*

Օգոստոսի 5-ին Գյումրու քաղաքային մարզադաշտում անցկացված Համահայկական ամառային 8-րդ խաղերին ներկա են եղել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչները՝ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանի գլխավորությամբ, ավագանու անդամներ և մարզաշխարհի ներկայացուցիչներ: Համահայկական ամառային 8-րդ խաղերին Սպիտակը ներկայացել է 54 մասնակցով, որոնց թվում են պատվիրակության անդամներ և մարզիկ-մարզիչներ: Մասնակիցների համար ձեռք են բերվել սպորտային հագուստ և մարզակոշիկներ: Իսկ մարզիկների կեցության համար հատկացվել է գումար: Սպիտակ համայնքը ներկայացնող մարզիկները հանդես են եկել 9 մարզաձևից՝ աթլետիկա, բազկամարտ, բադմինթոն, ֆուտզալ, շախմատ, թենիս, սեղանի թենիս, հրաձգություն, սպորտային պարեր: Կազմակերպված միջոցառման համար հատկացվել է 3 243 000 ՀՀ դրամ:





*Սպիտակ համայնքի ավագանին 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 89 Ա որոշմամբ ընդունեց Սպորտի եվ Մշակույթի բնագավառում ձեռքբերումներ ունեցած, Սպիտակ համայնքում հաշվառված եվ փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին խրախուսելու մասին որոշումը*

*Ստորև ներկայացվում են պարգևատրումներից մի քանի դրվագներ*










## *Սոցիալական պաշտպանություն*

2023թ. ընթացքում սոցիալապես խոցելի անձանց /հաշմանդամներ, տարեցներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք և այլն/ հատկացվել է 6 035 000 ՀՀ դրամ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ–ի հետ համատեղ իրականացվող Սպիտակ համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ) ներդրվել է 833 333 ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 10 800 000 ՀՀ դրամ:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ:

Սպիտակի համայնքապետարանի և «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում 2023թ. ընթացքում համայնքի սոցիալապես անապահով 240 ընտանիքների տրամադրվել է սննդօգնություն, 80 տարեցների տրամադրվել են ձմեռային կոշիկներ, 438 ընատնիքների՝ կատոֆիլի սերմացու:

«ԴԻԱԿՈՆԻԱ» բարեգործական հիմնադրամի կողմից համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների 252 երեխաներին տրամադրվել են ձմեռային կոշիկներ և տաք վերարկուներ:

Սպիտակի համայնքապետարանի և Վորլդ Վիժն Հայաստանի կողմից իրականացվող «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (#CLASS) ծրագրի շրջանակներում Սպիտակ համայնքի Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով զինհաշմանդամություն ունեցող, ինչպես նաև Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներից 6-ը «Վորլդ Վիժն» կազմակերպության կողմից մասնակցել են մասնագիտական հմտությունների ձեռքբերման դասընթացներին և ստացել համապատասխան գործիքներ:

Սպիտակի համայնքապետարանի և բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում 2023թ. սեպտեմբրի 19-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Սպիտակ համայնքում բնակություն հաստատած 100-ից ավելի ընտանիքների՝ 420 անձով, որոնցից 31-ն ունեն հաշմանդամության տարբեր խմբեր, տրամադրվել է բազմաբնույթ աջակցություն՝ սնունդ, հիգիենայի պարագաներ, անկողնային պարագաներ, ներքնակներ, մահճակալներ, խոհանոցային պարագաներ, կենցաղային տեխնիկա և հագուստ:

Տնայցերի կազմակերպման և ուսումնասիրությունների միջոցով հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց անհրաժեշտ սոցիալական աջակցության տրամադրումը իրականացվել է աջակցող ցանցի մասնակիցների փոխգործակցության և համատեղ գործունեության հիման վրա: Արդյունքում հստակեցվել է տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և բարելավվել ծառայության մատչելիությունը:

Սպիտակ համայնքի մշտական բնակչության թիվը ՀՀ ոստիկանության ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 43 604 մարդ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 50.76 %-ը (22 133 մարդ), կանայք՝ 49.24 %-ը (21 471 մարդ):

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Փաստացի բնակվողների թիվը կազմում է 32 733 բնակիչ:

Նպաստառուների թիվը՝ 2165 ընտանիք:

2023 թվականի ընթացքում Սպիտակ համայնքում ծնվել է 385 երեխա, մահացել 224 մարդ, գրանցվել է 105 ամուսնություն, 20 ամուսնալուծություն:

2022 թվականի հետ համեմատած 2023 թվականի ընթացքում Սպիտակ համայնքում ծնված երեխաների թիվը պակասել է 60-ով, մահացածների թիվը պակասել է 117-ով, ամուսնությունը պակասել է 76-ով, ամուսնալուծությունները ավելացել են 24-ով:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 27 անդամից, (ընտրված 2021 թվականի դեկտեմբերի 5-ին) լիազորությունների սկիզբը՝ 2021թ. դեկտեմբերի 17-ից:

2. Համայնքի ղեկավարը (ընտրված 2021 թվականի դեկտեմբերի 5-ին), լիազորությունների սկիզբը 2021թ. դեկտեմբերի 17-ից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է վարչական, հայեցողական, պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքների թիվը 178 է, որից քաղաքական-3, վարչական-20, հայեցողական-5, համայնքային ծառայողներ-80, տեխնիկական սպասարկման անձնակազմ-55, քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ-15:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների թիվը 15-ն էր:

2023 թվականի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 33 մրցույթ, իսկ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար՝ 12:

2023թ համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է եղել 4 կառուցվածքային ստորաբաժանումներից:

***Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը***՝

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժին

2. Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին

3. Մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժին

4. Քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

***Առանձնացված ստորաբաժանում***

Համայնքի ենթակայությամբ գործում են՝

1. «Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ

2.«Սպիտակ համայնքի  թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ

3.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շիրակամուտի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

4.«Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ համայնքի Արեվաշողի «Հասմիկ» Մանկապարտեզ» ՀՈԱԿ

5.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» ՀՈԱԿ

6.«Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ Համայնքի Մեծ Պարնու մանկապարտեզ» ՀՈԱԿ

7.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

8.«Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ

9. «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ

10.«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն » ՀՈԱԿ

11. «Շիրակամուտի երաժշտական դպրոց » ՀՈԱԿ

12.«Սպիտակի գեղարվեստի  դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

13.«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ

14. «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների  սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ

15. «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ

16. «ՀՀ Լոռու մարզի «Կաթնաղբյուր» ՀՈԱԿ

2023 թվականի ընթացքում ընդունվել է վարչական պատասխանատվության ենթարկելու մասին 12 որոշում, որից 10-ի դեպքում կատարվել է վճարում՝ ընդհանուր՝ 1 981 539.8 ՀՀ դրամի չափով, 1-ի դեպքում՝ հարուցվել է կատարողական վարույթ, 1-ի դեպքում՝ վարչական իրավախախտում կատարողը դիմել է դատարան որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

ՔԿԱԳ Սպիտակի սպասարկման կենտրոնում 2023թ. կատարվել են հետևյալ ակտային գրանցումները (ներառյալ Սպիտակի տարածաշրջանը)՝

1. Ծննդյան – 385,
2. Ամուսնության - 105,
3. Ամուսնալուծության – 20,
4. Հայրության ճանաչման- 203,
5. Որդեգրման - 0,
6. Քաղաքացիական կացության վերականգնման -11,
7. Անվան, ազգանվան, հայրանվան փոխման -24,
8. Գրանցումների ուղղման, լրացման -149,
9. Վկայականի կրկնօրինակների տրամադրում – 148,
10. Տեղեկանքներ – 356,
11. Մահվան -224: